

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱԾԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019Թ.

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱՆԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

12.07.2019թ.-ին Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում :

Նախագահությամբ ` համայնքի ղեկավար Ա. Ղազարյանի

Քարտուղարությամբ ` աշխատակազմի քարտուղար Ն.Պետրոսյանի

Մասնակցում էին ` ավագանու անդամները , համայնքապետարանի աշխատակազմը , բուժ.ամբուլատորիայի աշխատակիցները , արվեստի դպրոցի և մանկապարտեզի աշխատակիցները և համայնքի բնակիչներ :

Լսեցին Վերին Արտաշատ համայնքի ղեկավար Ա.Ղազարյանի հաշվետվությունը 2019թ. 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների մասին :

Արձանագրվեց , որ 2019թ. 1-ին կիսամյակում համայնքապետարանի կողմից համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները .

- Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 135 դիմում , ինչպես նաև բանավոր հարցումներ , որոնք քննարկվել են համայնքապետարանի աշխատակազմի , համայնքի սոցիալական հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստերի , ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ :
- Համայնքապետարանը ստացել է պաշտոնական նամակներ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են սահմանված ժամկետներում և տրվել են պատասխաններ :
- Բնակիչներին տրվել է 492 տեղեկանք :
- Քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափագրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ :  
Վերին Արտաշատ համայնքի սեփական եկամուտը կազմել է ` պլան 11138400 դր. , փաստացի կատարվել է 50125.7 հազար դր.
- Հողի հարկ ` պլան 21793.4 դր. , փաստացի կատարվել է 6067.4 դր.
- Գույքահարկ փոխ. համար ` պլան ` 15078.0 դր. , փաստացի կատարվել է 7338.0հազ. դր.
- Գույքահարկ շենքերի համար ` պլան ` 1422.0 դր. , փաստացի կատարվել է 706.1հազ. դր.
- Տեղ. Տուրքեր ` պլան ` 770.0հազ. դր. , փաստացի կատարվել է 762.3 հազ. դր.
- Աղբահանության վճար ` պլան ` 2500.0հազ. դր. , փաստացի կատարվել է 923.7 հազ. դրամ
- Դոտացիա ` պլան ` 57890.1 դր. , փաստացի կատարվել է 29723.6 հազ. դր.
- Շնողական գումար ` պլան ` 7700.0 հազ. Դր, փաստացի կատարվել է 4084.0 հազ. դրամ

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ տնտեսական միջոցառումներ և ծրագրեր , որոնցից են `
  1. Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1337000 դրամ ֆինանսական օգնություն :
  2. Մահացածների ընտանիքներին տրվել է 630000 դրամ ֆինանսական օգնություն :
  3. Հասարակական կազմակերպություններին տրվել է 22000 դրամ ֆինանսական օգնություն :
  4. Պարգևատրվել են գոհված զին. ծառայողների ընտանիքները և հայրենական մեծ պատերազմի վետերանները 220000 դրամ :
  5. Արվեստի դպրոցի սաներին տրամադրվել է 60000 դրամ ֆինանսական օգնություն :
- Կատարվել է համայնքի Նար-Դոսի փողոցի / 100 քմ / ասֆալտապատում
- Կատարվել է համայնքի Վ.Սարգսյան, Ս.Կապուտիկյան / մասնակի / և Ն.Քուչակի փողոցների հարթեցման աշխատանքներ
- Մշակույթի տան բակի ծառատունկ , տնկվել է մոտ 25 մշտադալար և 26 դեկորատիվ ծառեր
- Համայնքում ըստ գործող գրաֆիկի կատարվում է փողոցներ աղբահանությունը և սան.մաքրումը , մշտապես ակտիվորեն մասնակցում ենք համապետական շաբաթօրյակներին
- Համայնքի Ա.Գալստյան , Արարատյան , Հախնազարյան , Թամանյան ,Երևանյան և Շահումյան փողոցներում մշտապես առկա է գիշերային լուսավորություն :
- Մարտի 8-ին նվիրված միջոցառում է կազմակերպվել մշակույթի տանը , որի ընթացքում համայնքի ղեկավարը նվերներ է տվել համայնքապետարանի , դպրոցի , մանկապարտեզի , բուժ. ամբուլատորիայի , արվեստի դպրոցի կին աշխատակիցներին
- Քաղաքացու տոնին նվիրված միջոցառմանը համայնքը իր մասնակցությունն է բերել Արտաշատ քաղաքում ներկայացնելով ազգային ուտեստներ , երգ ու պար
- Մայիսյան տոներին նվիրված միջոցառում է կազմակերպվել համայնքի մշակույթի տանը
- Արվեստի դպրոցի 20 ամյակին նվիրված միջոցառում է կազմակերպվել մշակույթի տանը , որը նվիրվել է Հ.Թումանյանի և Կոմիտասի 150 ամյակին :
- Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ Երևան քաղաքից հրավիրվել էր շրջիկ թատրոն , օրը սպեյսի հետո ընթացիկ և բովանդակալից դարձնելու համար :

Վերին Արտաշատ համայնքի ղեկավար `



Ղազարյան

12.07.1019թ.